

8014



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

«17» 07 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 133 - 24

Նախաձեռնող՝

Քաղաքացի Գառնիկ Ավետիսյան
ք. Մասիս, նոր թաղամաս, շ.3, բն.31

Գործունեությունը՝

**Մասիս համայնքի Հերացու փողոց 28/1 հասցեում
նախատեսվող բազմաբնակարան բնակելի
շենքի կառուցում**
Արարարի մարզ

Առդիր՝ 6 թերթ

Հողամասի կառուցապատման ցուցանիշներն են՝
հողի ընդհանուր մակերեսը՝ 3757,4 քմ,
կառուցապատման մակերեսը՝ 1287.7 քմ,
սալվածք, կայանատեղի, ճանապարհ և այլն՝ 962.35 քմ,
Կանաչապատ մակերեսը՝ 1507,35 քմ,
Բնակարանների քանակը՝ 139:

Փակ և բացօթյա ավտոկայանատեղերի քանակը՝ 9:

Տարածքում առկա է քանդման ենթակա կիսակառույց՝ 250.3 քմ, հիմք՝ 168.1 քմ, պարիսպ՝ 6.7 քմ (քանդման աշխատանքները կիրականացվեն համապատասխան թույլտվություն ստանալուց հետո, հետադարձ բահ էքսկավատորի և քանդման մուրճի կիրառմամբ): Կիսաստորգետնյա հարկում նախատեսվում է ավտոկայանատեղի: Կայանման տեղեր նախատեսված են նաև տարածքի, փողոցներին հարող հատվածներում: Հրշեջ մեքենաների մոտեցման համար նախատեսված են թեքահարթակներ: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և ինքնափակվող:

Շենքի կառուցվածքը նախատեսվում է միաձույլ երկաթբետոնե սյունահեծանային համակարգով, միաձույլ երկաթբետոնե ծածկերով, արտաքին պատերի կոշտ լցաշարով: Երեսապատումը նախատեսվում է իրականացնել տրավերտինի և սև տուֆի մաքրատաշ սալերի համադրությամբ: Տանիքը կլինի հարթ, կազմակերպված ներքին ջրահեռացումով:

Բնակարանների սանհանգուցներից և խոհանոցներից նախատեսված են արտածման համակարգեր: Արտածման համար նախատեսված օդատարներն առանձին-առանձին մտնելու են հորանի՝ հատուկ նախատեսված օդատարի մեջ, մեկուսացվելու են բազալտե հանքաքամբակով և բարձրանալու են 2,5 մ: Ավտոկայանատեղիում նախագծված են մեխանիկական դրդմամբ ներածման և արտածման օդափոխության համակարգեր: Ներածման և արտածման համակարգերի սարքավորումները տեղադրվելու են հարկի առաստաղի տակ:

Շենքի բնակելի մասի միջանցքներից և ավտոկայանատեղիներից իրականացվելու է ծխահեռացում: Ծխահեռացման օդամուղները տեղակայված են տանիքի վրա: Հրդեհի ժամանակ վերելակների հորաններում, ավտոկայանատեղիի վերելակների հորանի և աստիճանավանդակի նախասրահներում նախատեսված են դիմհարման համակարգեր: Ստորգետնյա ավտոկայանատեղին ունի երկակի նշանակություն, ինչն անհրաժեշտության դեպքում կարող է ծառայել որպես պարզագույն թաքստոց: Այս հարկում նախատեսված է իրականացնել սանհանգուցներ պատասպարանից օգտվողների համար, այդ թվում նաև մեկ սանհանգույց սահմանափակ կարողությամբ մարդկանց համար: Տվյալ տարածքն ապահովված է օդափոխությամբ և վթարային լուսավորությամբ: Աստիճանավանդակներում նախատեսված է տեղադրել հրակայուն դռներ: Հեղեղատար համակարգի խողովակները նախատեսվում է անցկացնել ընդհանուր օգտագործման միջանցքներով:

Բնակելի շենքի էներգաարդյունավետության բարձրացման նպատակով իրականացվելու են համալիր միջոցառումներ, որոնց թվում են երեսպատման համակարգը, բարձր էներգաարդյունավետությամբ պատուհաններն և վիտրաժները, տանիքի և ստորգետնյա հարկի ջերմամեկուսացումը:

Ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառվելու են բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ, արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում, օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ




- շինարարական փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացվելու է ջրցան,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ փոշու տարածումը կանխարգելելու նպատակով,
- շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ է այդ տարածքներում ապահովել սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակը, ինչպես նաև կներգրավվեն ժամանակակից տեխնիկական միջոցներ,
- հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրական 2-3 անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկումներ,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճի և խնամքի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է ամբողջ շինարարության ընթացքում հատկացնել 1110000 դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով, Արարատի մարզի Մասիս համայնքի Հերացու փողոց 28/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Արարատի Մարզի Մասիս համայնքի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեն: Փորձաքննական գործընթացում հաշվետվության վերաբերյալ ստացվել են կարծիքներ, դիտողություններ և



առաջարկություններ, որոնք հաշվի են առնվել լրամշակված հաշվետվությունում: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Շինաշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարելու դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ բնապահպանական նորմերն ապահովելու նպատակով:

- Կառուցապատման գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

- Մարդու առողջության անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ կողմնակի անձանց մուտքը շինհրապարակ արգելելու համար, իրականացնել ցանկապատում, տեղադրել ցուցանակներ, արգելող պաստառներ և այլն:

- Բետոնի տեղափոխումն անհրաժեշտ է իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում բետոնի արտադրությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող շինադրի և թափոնների հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:


- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի:

- Անհրաժեշտ է իրականացնել շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողների լվացում

- Շինարարական աշխատանքների ժամանակ շինհրապարակներն անհրաժեշտ է պարսպապատել, կառուցվող շինություններն անհրաժեշտ է ծածկել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓՈՒԿՈՒ ՄԱՍ

Քաղաքացի Գառնիկ Ավետիսյանի կողմից ներկայացված Արարատի մարզի Մասիս համայնքի Հերացու փողոց 28/1 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է



դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Գոհար Մինասյան